



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 10/22**

14.06.2022թ.

ք. Երևան

ՀՀ Սարգոսի իրավունքների պաշտպանը (Արման Թաթոյանը, այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի, դատարան ներկայացվող դիմումների, հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափերի 2-ից մինչև 10 անգամ ավելացումը խոչընդոտներ է ստեղծում անձանց խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու հարցում և հանգեցնում դատարանի մատչելիության անհիմն սահմանափակման:

Պետական տուրքի սահմանված դրույքաչափերի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի վրա հնարավոր բացասական ազդեցության վերաբերյալ մտահոգություններ են արտահայտել ՄԻՊ հասցեագրված բողոքներով ու դիմումներով:

Խնդիրն առաջնահերթ բարձրացրել են փաստաբանները: Մասնավորապես, նրանք խնդրահարույց են համարում այն, որ կասկածի տակ է դրվում անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության և, առհասարակ, դատարանի մատչելիության իրավունքների արժեքանական նշանակությունը: Ստացվում է՝ պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը խաթարում է այս իրավունքի էությունը:

Թե՛ հանրային տիրույթի, թե՛ ՄԻՊ ուղղված մտահոգությունների թվում առկա են նաև այնպիսիք, որ սոցիալական վիճակի պատճառով անգամ գործող սակագների

պարագայում հնարավոր չի լինում վճարել պետական տուրքը: Անձն այդպիսով փաստացի գրկվում է դատական պաշտպանության իր սահմանադրական իրավունքի իրականացման հնարավորությունից: Պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումն ուղիղ կապվում է արդարադատության մատչելիության խախտման՝ քաղաքացու վրա դնելով անհամաչափ ֆինանսական լրացուցիչ բեռ:

Դիմողը վիճարկվող նորմերը դիտարկել է դատական պաշտպանության պատշաճ երաշխավորման, օրենսդրի կողմից դատարանների ծանրաբեռնվածության գործոնների միակողմանի դիտարկման, պետական տուրքի գծով որոշ արտոնությունների վերացման հիմնավորվածության, համաչափության սկզբունքի ապահովման և միջազգային պրակտիկայի տեսանկյունից:

### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ և 9.1-ին հոդվածների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին:

Վիճարկվող նորմերի բովանկադությունը հետևյալն է.

**Օրենքի 9-րդ հոդվածը** սահմանում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը: Համաձայն նշված հոդվածի՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող,	
--	--

այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝	
ա. դրամական պահանջով	հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 25 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
2) հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
3) հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 15-ապատիկի չափով
4) արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
5) օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 50-ապատիկի չափով
6) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
7) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի քառապատիկի չափով

<p>8) գործը պարզեցված վարույթի կարգով քննության ենթակա լինելու կամ քննվելու դեպքում հայցադիմումների համար՝</p>	
<p>ա. դրամական պահանջով</p>	<p>հայցագնի 2 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քաղաքի տուրքի 1.5-ապատիկից</p>
<p>բ. ոչ դրամական պահանջով</p>	<p>քաղաքի տուրքի 10-ապատիկի չափով</p>
<p>9) վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումների համար՝</p>	<p>քաղաքի տուրքի 1.5-ապատիկի չափով</p>
<p>9.1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ սույն մասի 9.2-9.5-րդ կետերով նախատեսված դեպքերի՝</p>	<p>գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի քաղաքի տուրքի 10000-ապատիկից</p>
<p>9.2) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝</p>	<p>քաղաքի տուրքի 100-ապատիկի չափով</p>
<p>9.3) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝</p>	<p>քաղաքի տուրքի 60-ապատիկի չափով</p>
<p>9.4) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝</p>	<p>քաղաքի տուրքի 50-ապատիկի չափով</p>

9.5) գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով
10) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 4 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, ապա հայցագնի 4 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 15-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 15 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջի գործերով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
գ. միայն վճռի պատճառաբանական մասի դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
դ. գործին մասնակից չդարձած անձանց բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ե. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
զ. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 15-ապատիկի չափով

<p>է. օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 60-ապատիկի չափով</p>
<p>ը. օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 30-ապատիկի չափով</p>
<p>թ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 10-ապատիկի չափով</p>
<p>ժ. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 10-ապատիկի չափով</p>
<p>ժա. վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոքներով</p>	<p>բազային տուրքի եռապատիկի չափով</p>
<p>ժբ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ սույն կետի «ժգ»- «ժզ» ենթակետերով նախատեսված դեպքերի՝</p>	<p>գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից</p>
<p>ժգ. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական</p>	<p>բազային տուրքի 200-ապատիկի չափով</p>

դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝	
Ժդ. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝	բազային տուրքի 90-ապատիկի չափով
Ժե. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝	բազային տուրքի 75-ապատիկի չափով
Ժզ. գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝	բազային տուրքի 60-ապատիկի չափով
11) վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վճռաբեկ բողոքում նշված վիճարկվող գումարի 5 տոկոսի չափով, իսկ եթե վերաքննիչ դատարանում վիճարկվել են առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, և վերաքննիչ դատարանը կայացրել է բողոքն ամբողջությամբ բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ապա հայցագնի 5 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 30-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 10 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջի գործերով	բազային տուրքի 40-ապատիկի չափով

<p>գ. միայն որոշման պատճառաբանական մասի դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 30-ապատիկի չափով</p>
<p>դ. գործին մասնակից չդարձած անձանց բողոքներով</p>	<p>բազային տուրքի 30-ապատիկի չափով</p>
<p>ե. վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 40-ապատիկի չափով</p>
<p>զ. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 20-ապատիկի չափով</p>
<p>է. օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 70-ապատիկի չափով</p>
<p>ը. օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 40-ապատիկի չափով</p>
<p>թ. ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու, ինչպես նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 20-ապատիկի չափով</p>



<p>Ժ. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով</p>	<p>բազային տուրքի 20-ապատիկի չափով</p>
<p>Ժա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ սույն կետի «Ժբ»-«Ժե» ենթակետերով նախատեսված դեպքերի՝</p>	<p>գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից</p>
<p>Ժբ. «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝</p>	<p>բազային տուրքի 200-ապատիկի չափով</p>
<p>Ժգ. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝</p>	<p>բազային տուրքի 90-ապատիկի չափով</p>
<p>Ժդ. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝</p>	<p>բազային տուրքի 75-ապատիկի չափով</p>
<p>Ժե. գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝</p>	<p>բազային տուրքի 60-ապատիկի չափով</p>

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
2) այն վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմումների համար, որոնցով կիրառվել է դրամական արտահայտությամբ վարչական պատասխանատվության միջոց հետևյալ չափերով՝	
ա. մինչև 10 հազար դրամը ներառյալ	բազային տուրքի քառապատիկի չափով
բ. 10 հազար դրամից մինչև 100 հազար դրամը ներառյալ	բազային տուրքի 5-ապատիկին գումարած 10 հազար դրամը գերազանցող մասի 1 տոկոսի չափով
գ. 100 հազար դրամից մինչև մեկ միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 10-ապատիկին գումարած 100 հազար դրամը գերազանցող մասի 0.5 տոկոսի չափով
դ. մեկ միլիոն դրամից մինչև հինգ միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 15-ապատիկին գումարած մեկ միլիոն դրամը գերազանցող մասի 0.25 տոկոսի չափով
ե. հինգ միլիոն դրամից մինչև 10 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 25-ապատիկին գումարած հինգ միլիոն դրամը գերազանցող մասի 0.1 տոկոսի չափով
զ. 10 միլիոն դրամից մինչև 50 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 30-ապատիկին գումարած 10 միլիոն դրամը գերազանցող մասի 0.05 տոկոսի չափով

է. 50 միլիոն դրամից մինչև 100 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 50-ապատիկին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող մասի 0.025 տոկոսի չափով
ը. 100 միլիոն դրամից ավելի	բազային տուրքի 70-ապատիկին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող մասի 0.01 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան բազային տուրքի 80-ապատիկը
3) հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների (հայցադիմումների) համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
4) վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
5) սույն մասի 2-րդ կետով նախատեսված վարչական ակտերի վիճարկման արդյունքով կայացված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	վարչական դատարանում համապատասխան վարչական ակտի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 10-ապատիկի չափով
6) վարչական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացրած դատական ակտերի դեմ բողոքներով՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
7) գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոքներով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
8) վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով
9) սույն մասի 5-րդ կետով նախատեսված բողոքների քննության արդյունքով կայացված	վարչական դատարանում համապատասխան վարչական ակտի

դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար`	վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 20-ապատիկի չափով
10) վերաքննիչ վարչական դատարանի` հատուկ վարույթների գործերով կայացրած դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
11) ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանելու և գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով

3. «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դատարաններ տրվող դիմումների, դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) սնանկության դատարան ներկայացվող դիմումների համար`	
ա. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
բ. ֆիզիկական անձանց (ներառյալ` անհատ ձեռնարկատերերին) սնանկ ճանաչելու դիմումների համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
2) սնանկության դատարանի կայացրած վճիռների դեմ վերաքննիչ բողոքների համար`	բազային տուրքի 30-ապատիկի չափով
3) սնանկության դատարանի կայացրած վճիռների դեմ բերված բողոքներով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար`	բազային տուրքի 40-ապատիկի չափով

4. Դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների,

տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչներ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

<p>1) դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար`</p>	<p>բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար` բազային տուրքի 15 տոկոսի չափով</p>
<p>2) հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկած կատարողական թերթի թղթային պատճենը տրամադրելու համար`</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>3) գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից ներկայացված կամ գործում առկա այլ փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար`</p>	<p>բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար` բազային տուրքի 10 տոկոսի չափով</p>
<p>4) գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար`</p>	<p>պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար` բազային տուրքի 50 տոկոսի չափով</p>
<p>5) դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար`</p>	<p>պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար` բազային տուրքի 50 տոկոսի չափով</p>

5. Արտարժույթով պահանջ ներկայացվելու կամ պահանջի վիճարկման դեպքում պետական տուրքը հաշվարկվում է համապատասխանաբար հայցադիմումը կամ բողոքը ներկայացնելուն նախորդող օրացուցային օրը Կենտրոնական բանկի հրապարակած

արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

**Օրենքի 9.1-ին հոդվածը** սահմանում է սահմանադրական դատարան տրվող անհատական դիմումների, Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը: Համաձայն նշված հոդվածի՝

Սահմանադրական դատարան դիմելու, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. Սահմանադրական դատարան դիմելու համար՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով
2. Սահմանադրական դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝	բազային տուրքի 50 տոկոսի և յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:*

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

*Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածներն այն հիմնավորմամբ, որ պետական տուրքի դրույքաչափերի 2-ից մինչև 10 անգամ ավելացումը խոչընդոտներ է ստեղծում անձանց խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու հարցում և հանգեցնում դատարանի մատչելիության անհիմն սահմանափակման:

ԱԺ 2019 թվականի ապրիլի 19-ի նիստում երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (ՀՕ-177-Ն օրենք), որով բարձրացվել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը՝ դրամական պահանջով հայցադիմումների համար նախատեսված՝ հայցագնի 2 տոկոսի չափով պետական տուրքը դարձնելով հայցագնի 3 տոկոսի չափով, պետական տուրքի նվազագույն շեմը 1500 դրամից դարձնելով 6000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար նախատեսված 4000 դրամ պետական տուրքը դարձնելով 20.000 դրամ, ոչ դրամական պահանջի գործերով վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրքը 10.000 դրամից դարձնելով՝ քաղաքացիական գործերով՝ 30.000 դրամ, վարչական գործերով՝ 20.000 դրամ, վճռաբեկ բողոքների դեպքում՝ քաղաքացիական գործերով՝ 40.000 դրամ, վարչական գործերով՝ 30.000 դրամ, իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների դեպքում 500.000 դրամը դարձնելով՝ 1.000.000 դրամ և այլն:

Պետական տուրքի նախկինում սահմանված դրույքաչափերն ավելացվել են 2-5 անգամ, առանձին դեպքերում 10 անգամ (իրավաբանական նշանակություն ունեցող

փաստերի հաստատման մասին դիմումների համար նախկին 2000 դրամի փոխարեն սահմանվել է 20.000 դրամի չափով պետական տուրք):

Վերացվել են պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ, մասնավորապես՝ մինչև ՀՕ-177-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ Օրենքի 22-րդ հոդվածը նախատեսում էր, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.

- երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման

- վերաբերյալ հայցերով.

- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով.

- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ բողոքներով, դատարանների որոշումների դեմ մյուս գանգատներով.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունվածների.

- մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

Ներկայումս գործող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը նախատեսում է, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ



կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքներով,

բ. մշակութային արժեքներն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս:

Կարծում ենք տարբերությունն ակնհայտ է:

Դատական պաշտպանությունը անձի՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունք է: Այդ իրավունքն անձն իրացում է դատարան դիմելու միջոցով: Հայց կամ դիմում ներկայացնելու համար օրենսդրորեն սահմանված է պետական տուրքի վճարման պայման: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար: Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով: Այս ամենով պայմանավորված՝ անձը, նախ, դատարան դիմելու հնարավորություն պետք է ունենա:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի

պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրատողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը հիմնավորվել է (ՀՕ-177-Ն օրենքի նախագիծ) այն հանգամանքով, որ նվազագույն աշխատավարձի ցուցանիշը 2003 թվականի դրությամբ կազմել է 13.000 դրամ, իսկ 2020 թվականին՝ 68.000 դրամ՝ աճելով 5.2 անգամ:

Սակայն այս տեսանկյունից անձի՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքի սահմանափակման հիմնավորումը խոցելի է, քանի որ հարկ է ուշադրություն դարձնել նաև այն էական փաստին, որ 2013 թվականից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում՝ նվազագույն աշխատավարձի աճին զուգահեռ, աճել են նաև սպառողական ապրանքների, ծառայությունների և այլնի գները: Ինչպես Դիմողն իրավացորեն նկատում է, օրինակ՝ եթե ՀՀ վիճակագրական կոմիտեի armstat.am կայքի «գնաճի հաշվիչ» դաշտում ընտրենք 2013 թվականի մայիս և 2021 թվականի մայիս ամիսները, ապա կտեսնենք, որ այդ տարիների ընթացքում գնաճը կազմել է 94.1%: Սա նշանակում է, որ նվազագույն կամ միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները բավարար չեն պետական դրույքաչափերի բարձրացումը հիմնավորելու համար:

Որպես ՀՕ-177-Ն օրենքի նախագծի հիմնավորում նշվել է նաև արդարադատության իրականացման ծախսերը դատարանների կողմից հավաքագրված պետական տուրքի գումարի չափը մինչև 4 անգամ գերազանցելու ցուցանիշը: Նախագծի հեղինակ Արդարադատության նախարարությունը, որպես հիմնավորում, նշել է նաև, որ

պետական տուրքի վճարումից ձևավորվող միջոցների հաշվին հնարավոր կլինի բարելավել դատարանների նյութատեխնիկական ապահովվածությունը, ավելացնել դատավորների և նրանց կցված ծառայողների թվաքանակը, բարելավել նրանց սոցիալական մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ վարձատրությունը, խթանել նոր կադրերի ներգրավումը դատական համակարգ:

Նման հիմնավորումը խնդրահարույց է այն առումով, որ յուրաքանչյուր տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքով դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակի համար գումար է հատկացվում ՀՀ դատական դեպարտամենտին: Այսինքն՝ արդարադատության իրականացման այդ գործընթացի շահառուն ողջ հասարակությունն է: Ուստի, առնվազն արդարացված չէ դատարանների բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերի վճարման ողջ բեռը դատավարության մասնակիցների վրա դնելը: Դատարանների նյութատեխնիկական ապահովվածության բարելավման, դատավորների և նրանց կցված ծառայողների թվաքանակի ավելացման, նրանց սոցիալական մի շարք երաշխիքների, այդ թվում՝ վարձատրության բարելավման և դատական համակարգ նոր կադրերի ներգրավման խթանման խնդիրները չպետք է հանդիսանան անձանց իրավունքները սահմանափակող կառուցակազմեր մշակելու պատճառ: Նման խնդիրները պետք է կարգավորվեն ոչ թե սահմանադրորեն երաշխավորված իրավունքների սահմանափակման, այլ այնպիսի կառուցակարգերի մշակումով, որոնք չեն հանգեցնի նման իրավունքների սահմանափակման:

Որպես պետական տուրքի դրույքաչափերի բարձրացման հիմնավորում է նշված նաև դատարանների ծանրաբեռնվածության թեթևացումը: Այսինքն՝ անձի իրավունքները սահմանափակում են զուտ միայն նրա համար, որ դատարաններում դատական գործերի քանակը նվազի: Այս մասով հիմնավորումն առնվազն անարդար է՝ հաշվի առնելով որ նժարի մյուս կողմին անձի՝ սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության իրավունքն է:

ՀՕ-177-Ն օրենքով պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց շնորհված պետական տուրքի գծով մի շարք արտոնություններ ուղղակի վերացվել են: Հարկ է նկատել, որ այդ արտոնությունները (բացառությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշումների դեմ բողոքների դեպքի, այն էլ շատ անորոշ

ձևակերպմամբ) վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ որևէ հիմնավորում և անդրադարձ չկա:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնանք Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:»:

Անդրադառնալով մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը՝ Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):»:

Անդրադառնալով նաև անձի իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական

իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Ինչպես Դիմոդն իրավամբ նկատել է, ՀՕ-177-Ն օրենքի նախագծով առնվազն պետք է ներկայացվեին հիմնավորումներ առ այն, որ

- պետական տուրքի սահմանված նման բարձր դրույքաչափերը պիտանի և անհրաժեշտ են օրենքով հետապնդված նպատակին,

- պետական տուրքի նման բարձր դրույքաչափեր սահմանելն ամբողջությամբ հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին և այդ նպատակի հետ գտնվում է համարժեք հարաբերակցության մեջ,

- օրենքի նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, քան պետական տուրքի նման բարձր դրույքաչափեր սահմանելն է,

- պետական տուրքի բարձր դրույքաչափեր սահմանելը չի շրջանցում օրենքի հետապնդած նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունը:

Որպես ՀՕ-177-Ն օրենքի նախագծի ընդունման ակնկալվող արդյունք՝ նախատեսվել է համապատասխանեցնել պետական տուրքի դրույքաչափերը սոցիալ-տնտեսական ցուցանիշներին, ինչպես նաև՝ բարձրացնել արդարադատության արդյունավետությունը: Բացի այդ, նախագծի ամփոփաթերթում նշված է, որ դրույքաչափերի բարձրացումն ուղղված է ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքի նախականիմանը՝ այդպիսով բարձրացնելով պետական տուրքի իրականացրած կանխարգելիչ գործառույթի արդյունավետությունը:

Նշվածի կապակցությամբ, նախ հարկ է նշել, որ երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարձրացումը չի նշանակում, որ պետությունը պետք է լթանկացնի՞ պետության մատուցած ծառայությունները: Սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարձրացմանը զուգահեռ անձանց վրա դրված պարտավորությունների բեռի ծանրացումը լիովին անիմաստ է դարձնում նման սոցիալ-տնտեսական ցուցանիշի աճը: Բացի դա, բարձրացնելով գործող դրույքաչափերը, դրանով պետությունը թեև մի կողմից կանխում է անհիմն հայցադիմումների հոսքը, սակայն մյուս կողմից, սահմանափակում է հիմնավոր հայցադիմումների ներկայացման հնարավորությունը, քանի որ շատ դեպքերում հաշվի առնելով երկրի սոցիալ տնտեսական ծանր վիճակը, անձը բավարար

միջոցներ չի ունենում դատարան դիմելու համար: Այսինքն՝ մի խնդրի կարգավորումը չպետք է հանգեցնի մեկ այլ, ավելի լուրջ խնդրի առաջացման: Անհիմն հայցադիմումների դեմ պայքարի այլ մեխանիզմներ կարելի է մշակել՝ զերծ այլ անձանց իրավունքների անհամաչափ սահմանափակումներից:

Այսպիսով, վերագերյալի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ ՀՕ-177-Ն օրենքի ընդունմամբ խաթարվել է անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը, դատարան ներկայացվող անհիմն հայցադիմումների հոսքը կանխելու, դատարանների նյութատեխնիկական վիճակը բարելավելու և դատական համակարգ նոր կադրեր ներգրավելու հիմնավորմամբ գործող պետական տուրքերի դրույքաչափերը բարձրացվել, իսկ մի շարք դեպքերում գործող արտոնությունները վերացվել են ի հաշիվ պետական տուրքի չափի այնպիսի բարձր դրույքաչափերի նախատեսման, որպիսի պարագայում անձը ի վիճակի չի լինում դիմելու դատարան՝ իր իրավունքների պաշտպանության համար, նման կարգավորումը չի բխում իավական պետության նպատակներից, համաչափ չէ հետապնդվող նպատակին, ավելին՝ ընդունվել է անձի իրավունքները սահմանափակող օրենք՝ առանց դրա բավարար և ծանրակշիռ հիմնավորման:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին խնդրահարույց է:

*Համակարգող՝*

 Recoverable Signature

**X** Lyudvik Davtyan

*Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169